

Լայագէի եթովպուհին, Արեւելեան բաղանիքի կանանց վերաբերեալ նկարագրութիւնները, ասոնց հետ մէկտեղ նկատի առէք այր մարդու կողմէ արտայայտուած ցանկութիւնները յիշեալ բոլոր քերթուածներուն մէջ, եւ դուք կը համոզուիք որ *Հեթանոս երգերու* մէջ ո՛չ թէ սեր ու գեղեցկի պաշտամունք կայ, այլ միայն *կիրք ու տոհմանք*, այն ալ միայն այր մարդու համար: Մինչեւ անգամ այն պարագաներուն, երբ խնդրոյ առարկայ կինը բանաստեղծի կարեկցութեան կ'արժանանայ (ինչպէս *Բանուորուհին*), դարձեալ նկատելի է կրքոտ վերաբերմունք մը դէպի անոր մարմինը: Եւ վերջապէս այնտեղ, ուր մարմինէն զատ ու աւելի՛ ուրիշ բան պիտի փնտռուեր, *Օրհնեալ ես դու ի կանայսի* մէջ, միս ու ոսկորէն զատ ոչինչ գոյութիւն ունի: Բնաւ խօսք չկայ կանացի յատկութիւններու մասին, իբր թէ անոնք երբեք գոյութիւն չունենային եւ իբր թէ իրականին մէջ կին ու այրը իրար կապողը մարմինն ու միսը ըլլար լոկ: Եթէ նոյն իսկ այս վերջին կարծիքին կողմնակից ենթադրենք բանաստեղծը, այդ պարագային գոնէ խօսք պիտի ըլլար նաեւ կանանց կողմէ զգացուած ցանկութիւններու մասին, մինչդեռ *Հեթանոս երգերու* մէջ կինը կը ներկայանայ այր մարդու ցանկութիւններուն բաւարարութիւն տալու համար ստեղծուած էակ: Մարդ չի կրնար երեւակայել թէ իգական սեռի ներկայացուցիչները ի՛նչ կ'զգան, երբ իրենց վերաբերեալ տողերը կը կարդան այս ժողովածուի մէջ: Անկախ սակայն անոնց զգացումներէն, *Հեթանոս երգերու* մէջ դէպի կինը ցոյց տրուած վերաբերումը կը մնայ իբր ոչ-իրական եւ ոչ-մարդկային, գէթ իւրաքանչիւր քաղաքակրթուած մարդու համար:

Իբր եզրակացութիւն կրնամ ըսել թէ՛ Վարուժանի *Յեղին սիրտը* իբր ամբողջութիւն աւելի յաջողած է, որովհետեւ այնտեղի նիւթերը իր սրտին աւելի մօտիկ ու հարազատ են. իսկ *Հեթանոս երգերը* աւելի կը շահէր, եթէ որոշ քերթուածներ ու բազմաթիւ կտորներ դուրս մնային անկէ: